ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացվող «Տվյալներ հաշվետու և թափանցիկ գործունեության համար» (ԴԱՏԱ) ծրագրի շրջանակում երիտասարդական հիմնախնդիրների և տարբեր ոլորտներում նրանց քաղաքացիական մասնակցությանն առնչվող հարցերի լուսաբանման նպատակով կարճ տևողությամբ տեսանյութերի պատրաստման

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ծառայության անվանում՝ *Երիտասարդության հիմնահարցերի բացահայտման և լուսաբանման նպատակով կարճ տևողությամբ տեսանյութերի պատրաստում*

Ծառայության իրականացման վայրը՝ *Դիլիջան խոշորացված համայնք, Տավուշ, ՀՀ*

Ծառայության ժամանակը՝ 2020թ. փետրվարից սկսած

Դիմելու վերջնաժամկետը՝ 20-ը հունվարի, 2021 թ.

«Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» հասարակական կազմակերպությունը հայտարարում է տեսանյութերի պատրաստման մրցույթ՝ երիտասարդության հիմնախնդիրների և տարբեր ոլորտներում նրանց քաղաքացիական մասնակցությանն առնչվող հարցերի լուսաբանման նպատակով:

Նախագիծը կոչվում է «Փոփոխությունը սկսվում է ինձնից և քեզնից»: 2018 թ. հեղափոխությունից հետո երիտասարդների քաղաքացիական մասնակցության հնարավորություններն ավելի ընդլայնվեցին՝ ապահովելով նրանց ներուժի բացահայտմանն ու զարգացմանը: Սակայն դեռևս շատ համայնքներում ոչ բոլոր երիտասարդներն են կարողանում ապահովել իրենց մասնակցականությունը անհատական կայացման ու զարգացման առումներով՝ զարգացման համար մատչելի միջավայրի բացակայության և համակարգերի բացակայության կամ պետական ու ոչ պետական կառույցների ոչ համաձայնեցված համագործակցության պատճառներով պայմանավորված:

Նպատակը.

Պատրաստել առնվազն 5-7 րոպե տևողությամբ 4 թեմատիկ տեսանյութ երիտասարդության առչվող խնդիրների, զարգացման և հանրային կյանքում ու որոշումների կայացման գործընթացներում նրանց մասնակցականության բարձրացման ու դրան խոչընդոտող հարցերի, հնարավոր լուծումների վերաբերյալ: Տեսանյութերի

բովանդակությունը պետք է հիմնված լինի «Երիտասարդների դրական զարգացում» մոդելի որոշ առանցքային բնորոշումների վրա, որը ներկայացված է ստորև՝ թեմաների տեսքով: Տեսանյութերի խորագրերի/վերնագրերի անվանումները պետք է հիմնված լինեն թեմաների նկարագրությունների վրա:

Ակնկալվում է, որ նախագծի արդյունքում վեր կհանվեն Դիլիջան խոշորացված համայնքը ներառող բնակավայրերում ապրող երիտասարդներին հուզող խնդիրները/կարիքները, դրանց լուծման համար իրենց տեսլականն ու առաջարկությունները և ոլորտում դերակատարություն ունեցող պետական ու ոչ պետական կառույցների ներկայացուցիչների կարծիքներն ու դիտարկումները:
Պատրաստված տեսանյութերը հասանելի կլինեն Կազմակերպության և գործընկեր կազմակերպությունների պաշտոնական կայքերում և մուլտիմեդիա/սոցիալական հարթակներում, անհրաժեշտության դեպքում կհեռարձակվեն առցանց և ոչ առցանց ԶԼՄ-երով:

Տեսանյութերի համար նախատեսված թեմաներն են.

1. Ինչպե՞ս կառուցել հմտություններ, արժեքներ և կարողություններ երիտասարդների համար: Ինչպե՞ս հասնել նրանց ներուժի բացահայտմանը, ինչպե՞ս խթանել առողջ փոխհարաբերություններ համայնքի, պետական ու ոչ պետական կառույցների ու այլ գործընկերների ու այլնի հետ:
   Հոգատարություն: Երիտասարդը մեծ նշանակություն է տալիս այլ մարդկանց օգնելու գործին:
   Ազնվություն: Երիտասարդը «ասում է ճշմարտությունը, նույնիսկ եթե այն դժվար է»:
   Դիմադրության հմտություններ: Երիտասարդը կարող է դիմադրել հասակակիցների բացասական ճնշմանը և վտանգավոր իրավիճակներին:

2. Տրամադրել հնարավորություններ երիտասարդներին՝ ավելացնելու նրանց գիտելիքները, հետաքրքրությունները, հմտություններն ու ունակությունները:
   Անձնական ուժ: Երիտասարդը զգում է, որ ինքը ունի վերահսկողություն այն բաների հանդեպ, ինչը որ իր հետ կատարվում է:
   Նպատակի զգացում: Երիտասարդը հայտնում է, որ իր կյանքը ունի նպատակ:
   Դրական տեսակետը սեփական ապագայի հանդեպ: Երիտասարդը լավատեսորեն է տրամադրված սեփական ապագայի հանդեպ:

3. Երիտասարդները ներգրավված են որպես փոփոխությունների աղբյուր իրենց անձնական և իրենց համայնքի դրական զարգացման համար:
   Պատասխանատվություն: Երիտասարդն ընդունում և հանձն է առնում սեփական պատասխանատվությունը:

Մրցույթին դիմելու կարգը.

Մրցույթին կարող են դիմել ստեղծագործող անհատներ, խմբեր և ոլորտում գործող մասնագիտացված կազմակերպություններ: Քանի որ թեմատիկան շոշափում է երիտասարդների հիմնահարցեր և նրանց կենսակերպին առնչվող ասպարեզներ,

հետևաբար ցանկալի է, որ դիմորդների տարիքը լինի 18-35: Տեխնիկական և ոճային ոչ մի սահմանափակում չկա:

Միակ սահմանափակումը յուրաքանչյուր ֆիլմի տևողությունն է՝ 5-7 րոպե:
Տեսանյութերը պետք է ունենան Full HD ֆորմատ, ձայնի բարձր որակ

Մրցույթին մասնակցելու այլ պահանջներ.

- Հայտատուն պետք է ներկայացնի իր կողմից պատրաստված նախկին աշխատանքներից մեկ կամ ավելի նմուշներ՝ անկախ թեմայից (նմուշների հղումներ)
- Նշել ծառայությունների մատուցման համար պահանջվող գումարը
- Ցանկալի է, որ սցենարի հեղինակը և ռեժիսորը ունենան համատեղ աշխատանքի փորձ, որը կդիտվի որպես առավելություն
- Նշել ժամկետներ, թե որքա՞ն ժամանակահատված կպահանջվի 4 տեսանյութերի պատրաստման համար (փուլ առ փուլ աշխատանքի կազմակերպման իրատեսական գրաֆիկ)
- Ստեղծագործողի/ստեղծագործող խմբի անդամների ինքնակենսագրական
- Այլ անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, որոնք կհամարեք հայտի պահանջները բավարարող

Բոլոր հայտերը կդիտարկվեն ԴԱՏԱ ծրագրի գործընկերների համատեղ աշխատանքային խմբի կողմից:

Հայտն ուղարկելու վերջնաժամկետը՝ ***20-ը հունվարի, 2021թ:***

Հայտն ուղարկել info@yccd.am էլեկտրոնային հասցեին:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք գրել info@yccd.am էլ. հասցեին:

Բաց մրցույթի բոլոր պահանջներին համապատասխանող հայտատուին արդյունքների մասին կտեղեկացվի ***2021թ հունվարի 27***-ին:

ԴԱՏԱ Ծրագիրն իրականացվում է ԴԱՏԱ կոնսորցիումի (Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, ՍՈՅԻԵՍ փորձագիտական կենտրոն, Բուն TV հիմնադրամ, «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ, ՍՈՍԵ կանանց հիմնահարցեր ՀԿ) կողմից ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերությամբ և օժանդակությամբ:

Սույն բաց մրցույթը իրագործվում է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Մրցույթի հայտարարության բովանդակությունը միմիայն Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն ՀԿ-ին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: